ԴԻԱԼԵՆ - ՍՈՒՊԵՐ 46 % ՁԼ

Դիալեն Սուպերը դաշտերը մաքրում է նույնիսկ դժվար ոչնչացվող մոլախոտերից:
Ազդեցության լայն շրջանակով հետծլային հերբեցիդ է հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունները դժվար ոչնչացող միամյա և բազմամյա մոլախոտերից պաշտպանելու համար:

Ազդող նյութը `344 գ/լ – 2.4 Դ թթու + 120 գ/լ դիկամբա:

Հատկություններ՝

- Ներբույսային ազդեցության խառնուրդային պատրաստուկ է:
- Լավագույն միջոցն է դժվար ոչնչացող երկշաքիլ, 2.4Դ-ի նկատմամբ դիմադրողականություն ունեցող մոլախոտերը վերացնելու համար:
- Մշակաբույսի նկատմամբ ունի բարձր ընտրողականություն:
- Վեգետացիայի ընթացքում ամբողջովին քայքայվում է:
- Օժտված է բարձր տնտեսական արդյունավետությամբ:

Առավելություններ՝

- Արագ ու երկարատև պաշտպանիչ ազդեցություն:
- Շնորհիվ երկակի ազդեցության ապահովում է բարձր արդյունավետություն:
- Պատրաստուկային ձևի բարձր խտության շնորհիվ ծախսի ցածր չափաքանակ:
- Առաջարկվող նորմաներով օգտագործելու դեպքում մշակաբույսի համար անվտանգ է:
- Երաշխավորում է բերքի հավելում և որակի բարելավում:
- Ցանքաշրջանառության մեջ չունի սահմանափակումներ հաջորդող մշակաբույսերի համար:

Ազդեցության շրջանակը

Ոչնչացվող մոլախոտերն են՝ ամբրոզիա, թալ ցրված, գեղավեր, պատատուկ, բողկուկ վայրի, մատիտեղ, երիցուկ, մանանեխ դաշտային, ճարճատուկ սովորական, տղտորիկ, թրթնջուկ, հավակատար:

Կիրառման հանձնարարականներ՝

Մշակումների թիվը՝ 1

Բանվորական հեղուկի ծախսը՝ 250-400 լիտր / հա

Սրսկման ժամանակ ուշադրություն դարձնել, որ հերբիցիդը չընկնի լայնատերև մշակաբույսերի վրա:

Ստանդարտ փաթեթավորում՝ 10 լ պոլիէթիլենային տարա:

Պահպանում՝ պահպանել չոր պահեստում 0^0C - +35^0C ջերմաստիճանի պայմաններում:

Պահպանության ժամկետը - 5 տարի՝ հաշվարկված արտադրության օրից:

Դիալեն Սուպեր 46% ՁԼ - պահպանության, տեղափոխման և կիրառման ժամանակ անհրաժեշտ է խստորեն պահպանել անվտանգության կանոնները:

Մշակաբույսի անվանումը	*Ծախսի նորմա լ/հա*	*Բանվորական հեղուկի ծախսը լ/հա*	*Մշակման ժամկետները*
Աշնան ցորեն, աշորա	0.6-0.8	250-400	Սրսկել վաղ գարնանը մշակաբույսի թփակալման փուլից մինչև խողովակակալում
Գարնանացան ցորեն, գարի, վարսակ	0.5-0.7	250-400	3 տերև փուլից մինչև խողովակակալում
Եգիպտացորեն	1.0-1.5	250-400	Սրսկել մշակաբույսի 3-5 տերև փուլում